ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԻՅԱՆ ԳՐԻՇԱ ԼԵՎՈՆԻ

ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺՁ.00.03 - «Կենդանիների վարակիչ հիվանդություններ, սանիտարական փորձաքննություն, զոոհիգիենա» մասնագիտությամբ անասնաբուժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2008

ГОСУДАРСТВЕННЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ

БАГИЯН ГРИША ЛЕВОНОВИЧ

ИЗУЧЕНИЕ ЭПИЗООТОЛОГИИ ТУБЕРКУЛЕЗА КРУПНОГО РОГАТОГО СКОТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата ветеринарных наук по специальности 16.00.03 – "Заразные болезни животных, санитарная экспертиза, зоогигиена"

Ереван – 2008

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում

Գիտական ղեկավար՝ անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Լ. Գրիգորյան

պաշտոնական ընդդիմախոսներ՝ անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Վ. Աբրահամյան

անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Ս. Ավագյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է « 01 » հուլիսի 2008թ. ժ. 13 ^{30}-ին Հայաստանի պետական ագրարային համալսարանում գործող ԲՈՀ-ի 022 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող. 74

Ատենախոսության հետ կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական ագրարային համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է «30» մայիսի 2008թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

ան.գ.թ., դոցենտ Ա.Մ. Բաղալյան

Тема диссертации утверждена в Государственном аграрном университете Армении

Научный руководитель: доктор ветеринарных наук, профессор С.Л. Григорян

Официальные оппоненты: доктор ветеринарных наук, профессор В. В. Абраамян

кандидат ветеринарных наук, доцент С. С. Авакян

Ведущая организация: Ереванский государственный медицинский университет им. М. Гераци

Защита диссертации состоится " 01 " июля 2008г. в 13 ^{30}- ч. на заседании специализированного совета 022 ВАК при Государственном аграрном университете Армении по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

С диссертацией можно ознакомиться в библиотеке Государственного аграрного университета Армении.

Автореферат разослан " 30 " мая 2008г.

Ученый секретарь специализированного совета,

канд.вет. наук, доцент А.М. Бадалян

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1.Թեմայի արդիականությունը: Վարակիչ հիվանդությունների համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում տուբերկուլյոզը, որի նկատմամբ ընկալունակ են ոչ միայն կենդանիների և թռչունների բազմաթիվ տարատեսակներ, այլև ծանր հետևանքներով ախտահարվում է նաև մարդը: Համարվելով սոցիալ-տնտեսական չարիք, նրա դեմ պայքարի և կանխարգելման արդյունավետ միջոցների մշակման ու կատարելագործման հարցերով զբաղվել են հայրենական և օտարազգի շատ գիտնականներ (Բասարաբ Ռ.Ի., 1982 ; Բեզգինա Ն. Վ., 2007 ; Բոյկո Ա.Ա., 2000; Դոնչենտո Ա.Ս., 1998; Կոզլով Ռ.Ե., 2007; Նայմանով Ա.Խ., 2002; Օվդիենտո Ն.Պ., 1999; Collins J. D., 1984; Kantor Z. et al., 1987; Kochl A., 1991; Schliesser T., 1985 և ուրիշներ):

Անկախ սեփականության բնույթի, բոլոր տեսակի անասնապահական տնտեսություններում հիվանդությունը հասցնում է շոշափելի տնտեսական վնաս, անապահով տնտեսությունների առողջացումը տևում է տարիներ և ռեալ հնարավորություններ ստեղծում կենդանիների և մարդկանց զանգվածային վարակման: Ներկա ժամանակում Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տվյալների համաձայն տուբերկուլյոզով հիվանդ մարդկանց թիվը կազմում է 48 միլիոն, յուրաքանչյուր տարի հիվանդանում են 8 և մահանում 3 միլիոն մարդ (Պոմիկանով Ն.Պ., 2005):

Տուբերկուլյոզով հիվանդացության այժմյան ծանր համաճարակային իրավիճակը պայմանավորված է նրանով, որ անասնապահության սեփականաշնորհման և ապակենտրոնացման պայմաններում, առանց անասնաբուժական հսկողության վարակակիր կենդանիների տեղափոխումների արդյունքում ձևավորվեցին բազմաթիվ նոր համաճարակային օջախներ: Տեղին ենք համարում նշել, որ նախկին ԽՍՀՄ-ի փլուզման ժամանակաշրջանից մինչև այժմ Հայաստանի Հանրապետության տարածքում գրեթե չի իրականացվել ծրագրային հակահամաճարակային զանգվածային միջոցառումներ տուբերկուլյոզ հիվանդության հանդեպ:

Խնդիրն այն է, որ տուբերկուլյոզի դեմ կատարվող միջոցառումները պետք է համապատասխանեն անասնապահության վարման բնույթին: Միջոցառումների նախկին հրահանգը մշակված է հանրային անասնապահության համար, մինչդեռ ապակենտրոնացված և սեփականաշնորհված անասնապահությանը անհրաժեշտ է տուբերկուլյոզի կանխարգելման և պայքարի միջոցառումների նոր հրահանգ, նոր մոտեցումներ:

Ելնելով հանրապետությունում կենդանիների և մարդկանց տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակից, տուբերկուլյոզի ալերգիական ախտորոշման ցածր արդյունավետությունից, գյուղացիական տնտեսություններում ախտորոշման ալերգիական եղանակի կատարելագործումը հիմնովին արդարացված և այժմեական է:

Անապահով տնտեսությունների առողջացման գոյություն ունեցող մեթոդը անարդյունավետ է այն առումով, որ այն տևում է մի քանի տարի, ինչպես նաև միանվագ ներմաշկային տուբերկուլինացման դեպքում չեն հայտնաբերվում աներգիայի վիճակում

գտնվող կենդանիներ: Այս առումով մեր կողմից մշակված կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային փորձը արդյունավետ է թե համաճարակային և թե տնտեսական տեսակետներից:

1.2.Հետազոտությունների նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակը, կատարելագործել հիվանդության ախտորոշման եղանակները գյուղացիական, կոլեկտիվ գյուղացիական և ֆերմերային տնտեսություններում, առաջարկել համալիր ալերգիական ախտորոշման եղանակ և անապահով տնտեսությունների առողջացման նոր սխեմա, որոնք կիրառելի կլինեն Հայաստանի Հանրապետությունում անասնապահության վարման նոր պայմանների համար:

Նպատակի իրականացման համար ծառացել են հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակի հետադարձ վերլուծության պատկերը:
2. Սոնիտորինգի մեթոդներով ուսումնասիրել տուբերկուլյոզի իրավիճակը գյուղական համայնքներում:
3. Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման մեթոդների համեմատական գնահատականը գյուղացիական, կոլեկտիվ գյուղացիական և ֆերմերային տնտեսություններում՝
   - սիմուլտան փորձի ալերգիական հակազդումը առանձին կենդանիների մոտ:
4. Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի նկատմամբ անապահով համայնքների առողջացման մեթոդների կատարելագործում անասնապահության վարման նոր պայմաններում՝
   - տուբերկուլյոզի նկատմամբ անապահով համայնքների և ֆերմերային տնտեսությունների առողջացումը նոր մեթոդով:

1.3. Աշխատանքի գիտական նորույթը: Առաջին անգամ ներկայացվում է խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում, նրա տարածվածության, վարակվածության ինտենսիվության, ինֆեկցիայի զարգացման դինամիկայի համեմատությունը խորհրդային և անկախության ժամանակաշրջանում: Հաստատված է սիմուլտան տուբերկուլինային փորձի ախտորոշման մեթոդի արդյունավետությունը և առավելությունը, կաթնասունների համար ՊՊԴ-տուբերկուլինի և ԿԱՄ-ի միաժամանակյա օգտագործման դեպքում տուբերկուլինի նկատմամբ օրգանիզմի յուրահատուկ և ոչ յուրահատուկ հակազդումները տարբերակելու համար:

Բացահայտվել է արագացված սիմուլտան փորձի օգտագործմամբ ՊՊԴ-տուբերկուլինի և ԿԱՄ-ի նկատմամբ ալերգիական հակազդումների գնահատման հնարավորությունը անհատական հաշվարկման միջոցով:

Առաջին անգամ ներկայացվում է տուբերկուլյոզի հանդեպ անապահով համայնքների առողջացման նոր՝ կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային տուբերկուլինացման

համալիր փորձի օգտագործման արդյունավետությունը ավանդական, միանվագ ներմաշկային տուբերկուլինացման մեթոդի նկատմամբ:

1.4. Աշխատանքի գործնական նշանակությունը: Հիմք ընդունելով խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի տարածվածության, ախտորոշման և անապահով տնտեսությունների առողջացման վերաբերյալ կատարված հետազոտությունների արդյունքները, կարելի է մշակել և ներկայացնել նոր հրահանգներ, որոնք կիրառելի կլինեն Հայաստանի Հանրապետությունում անասնապահության վարման նոր պայմաններում:

Սիմուլտան փորձի օգտագործման արդյունքները և կենդանիների անհատական հաշվառման մեթոդները հիմք կհանդիսանան ներկայացնելու նոր առաջարկություն տուբերկուլյոզի տարբերակիչ ախտորոշման գործում: Հիվանդ կենդանիների հայտնաբերման և ախտորոշման ժամանակի տեսակետից սիմուլտան փորձի մեր կողմից ներկայացված արագացված եղանակը օժտված է համաճարակաբանական բարձր արդյունավետությամբ և համապատասխանում է Եվրոմիության երկրների կողմից ընդունված խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման միասնական մեթոդի պահանջներին:

1.5. Հետազոտության արդյունքների հրապարակումը: Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրապարակվել է 4 գիտական աշխատանք՝ հայրենական և արտերկրի ամսագրերում:

1.6.Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության աշխատանքը շարադրված է համակարգչային «149» էջի վրա և բաղկացած է ներածությունից, գրական ակնարկից, սեփական հետազոտություններից, ստացված տվյալների քննարկումից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից: Օգտագործված գրականության ցանկը բաղկացած է «208» անվանումից, որոնցից «63» արտերկրի հեղինակներ, «145» ԱՊՀ-ի հեղինակներ:

Աշխատանքը լուսաբանված է «19» աղյուսակներով, «4» ֆոտոնկարներով, «3» նկարներով և «2» կորագծերով:

2. ՍԵՓԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Հետազոտությունների նյութը և մեթոդները

Աշխատանքը կատարվել է 2004-2008թ.թ. հանրապետության տարբեր մարզերի (Սյունիք, Արարատ, Արագածոտն, Վայոց Ձոր, Կոտայք) համայնքների բնակիչներին պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի վրա, Հայաստանի պետական ագրարային համալսարանի համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոնի, «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության բազայի վրա:

Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի համաճարակաբանական պրոցեսների դրսևորման հետադարձ վերլուծության համար օգտագործել ենք վիճակագրական ինֆորմացիայի տվյալները, որը ձևավորվել է անասնաբուժական գերատեսչական հաշվետվությունների փաստացի տվյալների վրա 1960-2000թ.թ. և առանձին 2001-2007թ.թ. համար: Տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակի առանձին հարցերի պարզաբանման ժամանակ օգտվել ենք նաև «Անասնաբուծության և անասնաբուժության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի վերաբերյալ 1984-1995 թ.թ. հաշվետվություններից:

Օգտագործվել է անասնապահական տնտեսությունների հետազոտությունների նյութերը, որտեղ խոշոր եղջերավոր կենդանիների ստուգման ժամանակ հայտնաբերվել են տուբերկուլիների նկատմամբ հակազդած կենդանիներ:

Վերլուծական տվյալների հիման վրա ձևակերպվել են համապատասխան ամփոփիչ աղյուսակներ և կորագծեր հանրապետության ամբողջ տարածաշրջանի, ինչպես նաև առանձին շրջանների և գոտիների համար:

Տուբերկուլյոզի ախտորոշիչ հետազոտությունները կատարվել է համաձայն ԽՍՀՄ Պետագրոարդի կողմից 25.02.86թ. հաստատված «Կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման հրահանգ»-ի: Աշխատանքի ընթացքում օգտագործել ենք կաթնասունների համար նախատեսված ՊՊԴ-տուբերկուլինը և ԿԱՄ-ը (ատիպիկ միկոբակտերիաներից պատրաստած համալիր ալերգեն), արտադրված Կուրսկի և Սումսկի բիոֆաբրիկաներում: Տուբերկուլինի ներմաշկային ներարկման համար օգտագործվել է ԲԻ-7 ինքնահոս ներարկիչը: Ներարկման տեղի մազերը խուզվել և ախտահանվել է 70^0 սպիրտով:

Ալերգիական ռեակցիաների հաշվարկը կատարվել է ալերգենների ներարկման տեղի մաշկի ծալքի հաստացման չափումով: Կենդանիներին համարել ենք տուբերկուլինի նկատմամբ հակազդած, եթե մաշկի ծալքի հաստությունը ունեցել է 3մմ և ավել չափեր:

Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի տարբերիչ ախտորոշման մեր կողմից առաջարկված արագացված սիմուլտան տուբերկուլինային փորձի կիրառման գնահատականը, կաթնասունների համար նախատեսված ՊՊԴ-տուբերկուլինի և ԿԱՄ ալերգենի միջոցով կատարվել է Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի տուբերկուլյոզի նկատմամբ ապահով հինգ համայնքների 3018 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների վրա: Հաշվի է առնվել սիմուլտան տուբերկուլինային փորձի ալերգիական ռեակցիաների արտահայտման չափերի տարբերությունները: Տուբերկուլինի միանվագ ներարկումից 72 ժամ հետո կարդացվել է ալերգիական ռեակցիան և դրական հակազդած կենդանիների պարանոցի հակառակ կողմում միաժամանակ նույն չափաբաժնով ներարկվել են երկու ալերգենները (ՊՊԴ-ն և ԿԱՄ-ը), իրարից 10-15 սմ հեռավորության վրա, ռեակցիան կարդացվել է ներարկումից 72 ժամ հետո, ընդ որում հաշվարկը կատարվել է անհատական: ԿԱՄ-ի չափերի գերազանցումը ՊՊԴ-ի նկատմամբ գնահատվել է բացասական, այսինքն կենդանուն հաշվել ենք առողջ, իսկ ՊՊԴ-ի չափերի գերազանցության դեպքում՝ հիվանդ: Ալերգիական հետազոտությունները և հակազդած

կենդանիների ախտորոշիչ մորթը կատարվել է հանձնաժողովի մասնակցությամբ, որի կազմի մեջ մտել են տարածաշրջանի և մարզի անասնաբուժական ծառայության ներկայացուցիչները, տվյալ համայնքի անասնաբույժը և անասնատերը: Մորթված կենդանիներից, որոնց մոտ ախտաբանաանատոմիական հետազոտության ժամանակ հայտնաբերվել են տուբերկուլյոզի բնորոշ փոփոխություններ և մյուսներից, որոնց մոտ չի հայտնաբերվել, վերցվել է ավշային հանգույցներ, ներքին օրգաններից նմուշներ հետագա լաբորատոր (մանրէաբանական և կենսաբանական) հետազոտությունների համար:

Օգտագործվել են հանրապետության առանձին մարզերի համայնքներում և ֆերմերային տնտեսություններում տուբերկուլյոզի նկատմամբ հետազոտված կենդանիների տուբերկուլինացման արդյունքները, որտեղ ծրագրային ալերգիական հետազոտությունների ժամանակ հայտնաբերվել կամ չեն հայտնաբերվել տուբերկուլինի նկատմամբ հակազդած խոշոր եղջերավոր կենդանիներ: Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի տարածվածության վերաբերյալ ռեալ պատկերացում կազմելու համար մեր կողմից կազմվել է հատուկ հանձնաժողով «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի և հանրապետության որոշ մարզերի մասնագետների մասնակցությամբ անցկացնելու հիվանդության ախտորոշման մոնիտորինգ: Աշխատանքները կատարվել են Արարատի, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի մարզերի 29 համայնքներում և ֆերմերային տնտեսություններում 5037 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների վրա: Առանձին վերլուծության է ենթարկվել Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում 2002-2007 թ.թ. ընթացքում տուբերկուլյոզի վերաբերյալ անցկացված մոնիտորինգի տվյալները:

Մանրէաբանական հետազոտությունների համար պատրաստվել է կենսանյութերից վերցրած արտատպվածք քսուքներ, որոնք չորացվել և ներկվել են Ցիլ-Նիլսենի եղանակով: Վերցրած նյութերը, աճեցվածքային և կենսաբանական փորձերի համար մշակվել են Ա.Պ. Ալիկանի մեթոդով և կատարվել ցանք Գելբերգի ձվային սննդային միջավայրում, դրվել է թերմոստատում 37.5^0C-ի պայմաններում մինչև 3 ամիս տևողությամբ: Փորձանոթներում մանրէական աճի առկայության դեպքում որոշվել է գաղութների բնույթը և կատարվել մանրէաբանական հետազոտություն: Յուրաքանչյուր փորձնական մորթված կենդանուց վերցրած կենսանյութից պատրաստած կախուկից դրվել է կենսաբանական փորձ, որի համար վարակվել են 2 ծովախոզուկ 300-350 գրամ կենդանի զանգվածով: Վարակված լաբորատոր կենդանիների նկատմամբ դիտումը տևել է 3 ամիս: Եթե վարակված ծովախոզուկները նշված ժամկետում չեն սատկում, կատարվում է մորթ և հետազոտվում ախտաբանաանատոմիական և մանրէաբանական մեթոդներով: Լաբորատոր հետազոտությունները կատարվել են համաձայն տուբերկուլյոզի ախտորոշման հրահանգով նախատեսված մեթոդների:

Հաշվի առնելով տուբերկուլյոզ հիվանդության առաջացման և զարգացման փուլերը (առաջնային աֆեկտ, երկրորդային աֆեկտ, տարածված փուլ- գեներալիզացիա), մենք մշակել ենք տուբերկուլյոզով անապահով նախիրների առողջացման նոր եղանակ, որի էությունը նույն կենդանուն կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային տուբերկուլինացումն է: Այս

մեթոդը նորույթ է և այն առաջին անգամ մշակվել է մեր կողմից: Նոր եղանակի կատարման սխեման հետևյալն է՝

տուբերկուլինը (ՊՊԴ-տուբերկուլին կաթնասունների համար) ներարկվում է ներմաշկային, անասեղ ինքնահոս ներարկիչով (ԲԻ-7) համածայն գործող հրահանգի: Ռեակցիան կարդացվում է ներարկումից 72 ժամ հետո և բոլոր բացասական կենդանիներին տուբերկուլինը ներարկվում է երկրորդ անգամ նույն տեղը և նույն չափաբաժնով, որից հետո ռեակցիան կարդացվում է 24 ժամ հետո: Տուբերկուլինի առաջին կամ երկրորդ ներմաշկային ներարկմանը զուգընթաց կատարվում է նաև ակնային փորձը. 3-5 կաթիլ տուբերկուլինը կաթեցվում է աչքի ներքևի ակնաթաղանթի մակերեսի վրա, ռեակցիան կարդացվում է 3, 6, 9, 12 և 24 ժամ հետո: Կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային տուբերկուլինացման փորձը դրվում է միայն տուբերկուլյոզի նկատմամբ անապահով նախրում՝ կովերի և երինջների գլխաքանակի վրա: Խոշոր եղջերավոր կենդանիների մնացած հասակախումբը սկսած 2 ամսականից, ստուգվում է միանվագ տուբերկուլինացման մեթոդով: Աշխատանքները կատարվել է Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Սալվարդի և Գորայքի համայնքներում՝ առաջին ներմաշկային տուբերկուլինացումը կատարվել է 2936 գլուխ կովերի և երինջների վրա (3 անգամ), իսկ 2-րդը՝ 2266 գլխի (3 անգամ) և ակնայինը՝ (մեկ անգամ) - 742 գլուխ կովերի և երինջների վրա:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակը հանրապետությունում 1960-1980թ.թ.

Հայաստանում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի տարածվածության համաճարակային իրավիճակի վերաբերյալ աշխատանքում ներկայացված նյութերը վկայում են, որ տուբերկուլյոզն արձանագրվել է հանրապետության բոլոր կլիմայական և աշխարհագրական գոտիներում, որը ունեցել է անհավասարաչափ, բայց լայն տարածում: Այսպես, Շիրակի գոտում՝ յուրաքանչյուր երրորդ, Արարատի գոտում՝ յուրաքանչյուր յոթերորդ, իսկ Ստեփանավանի և Կալինինոյի շրջաններում (մինչև 1950 թվականը) յուրաքանչյուր երկրորդ տնտեսությունն եղել է անապահով: Եթե Շիրակի գոտու 5 շրջաններում 1966-1978 թ.թ. ստուգվել է 1290000 խոշոր եղջերավոր կենդանիներ, հայտնաբերվել են 10332 հիվանդներ, անապահով են հայտարարվել 43 տնտեսություններ, ապա Արարատյան հարթավայրի 5 շրջաններում նույն ժամանակաշրջանում ստուգված 730500 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներից հայտնաբերվել են 1045 հիվանդներ և հայտարարվել անապահով 14 տնտեսություն: Ըստ գոտիների նման բացահայտ տարբերությունները, հավանական է, կապված են եղել տուբերկուլյոզի դեմ տնտեսական – կազմակերպչական, անասնաբուժա-սանիտարական, կանխարգելման ու պայքարի յուրահատուկ միջոցառումների ոչ լիարժեք կատարման, ծրագրային ստուգումների ժամանակ անասնագլխաքանակի ոչ լրիվ ընդգրկման, հայտնաբերված հիվանդներին ժամանակին մթերման չհանձնման, ինչպես նաև ամառային

արոտավայրերում 5-6 ամիսների ընթացքում ապահով և անապահով նախիրների ակտիվ շփման հետ: Այս տեսակետից Արարատյան հարթավայրի տնտեսություններում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզով հիվանդության անհամեմատ սակավ լինելը կապված են անասնապահության վարման տեխնոլոգիայի և միջոցառումների լիարժեք կատարման մակարդակի և կովերի շուրջ տարվա մսուրային պահվածքի հետ:

Աղյուսակ 1.

Խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի նկատմամբ հետազոտությունների միջին տարեկան տվյալները, ըստ գոտիների (1960-1973թ.թ.)

Գոտիների անվանումը	Անապահով տնտեսություն-ների տարեկան միջին տվյալները	Հետազոտ-վել է /հազար գլուխ/	Հայտնաբերվել է տուբերկուլինի նկատմամբ հակազդածներ /գլուխ/	Հակազդած կեն-դանիների տոկոսը հետազոտված գլխաքանակի նկատմամբ
Շիրակ	21	130	900	0,72
Արարատ	12	94	400	0,42
Լոռի-Փամբակ	1,8	100	59	0,06
Սևանա լճի ավազան	3	100	100	0,1
Զանգեզուր-Դարալագյազ	4,8	103	125	0,1

Հիմք ընդունելով Հայաստանում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի վերաբերյալ հետադարձ վերլուծական տվյալները, այն կարելի է բաժանել զարգացման իրար հաջորդող 3 փուլերի: Առաջին փուլում կուտակվել են բավականին նյութեր, որոնք վերաբերվում են սպանդանոցներում մորթի ենթարկած կենդանիների ախտաբանաանատոմիական հետազոտությանը, երբ հայտնաբերվել է միայն հիվանդ կենդանին, մինչդեռ տվյալ տնտեսությունը համարվել է ապահով: Կենդանիների տուբերկուլյոզի դեմ պայքարի երկրորդ փուլը սկսվել է ախտորոշման ակնային փորձի օգտագործման պահից: Այս մեթոդի կիրառմամբ ավելացել է դրականորեն հակազդող կենդանիների գլխաքանակը: Երրորդ փուլը համարվում է հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ առավել հիմնավորված պայքարի ժամանակաշրջան, երբ սկսած 1950 թվականից կիրառվել է ախտորոշման համալիր մեթոդը: Այս դեպքում հնարավոր է եղել համեմատաբար ավելի շատ վարակված կենդանիներ հայտնաբերել, ինչպես նաև առողջացնել բազմաթիվ անապահով տնտեսություններ:

Տուբերկուլյոզի համաճարակային իրավիճակի փոփոխությունների հետադարձ վերլուծական տվյալները ցույց են տվել, որ տուբերկուլյոզը հանրապետությունում 1960-2000թ.թ. ընթացքում ունեցել է ոչ հավասարաչափ, բայց լայն տարածում: Հիվանդության համաճարակաբանական ընթացքի կորագիծն ունեցել է ալիքաձև բնույթ, ընդորում 1960-1980թ.թ. արձանագրվել է երկու վերելք, իսկ 1980-2000թ.թ. մեկ, որոնք պայմանավորվել են տարածաշրջանում անապահով տնտեսությունների հայտնաբերման և առողջացման փաստացի տվյալներով: Եթե 1980 թվականից մինչև 1984 թվականի հունվար ամիսը հանրապետության տարածաշրջանում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի նոր անապահով

տնտեսություն չի արձանագրվել, մնացած են եղել միայն երկու անապահով տնտեսություն երկու շրջաններում (Եղեգնաձորում և Սևանում), որոնցում հայտնաբերվել են տուբերկուլինի նկատմամբ հակազդած երկուական գլուխ կենդանի, ապա 1984-86թ.թ. հայտնաբերվել է 43 անապահով տնտեսություն: 1986 թվականին տուբերկուլյոզով հիվանդների թիվը կազմել է 2945 գլուխ, որոնք հիմնականում եղել են կթու կովեր: ՀՀ գյուղատնտեսության նախարարության անասնաբուժական պետական տեսչության 1995-2002 թ.թ. տարեկան հաշվետվությունների տվյալների համաձայն հանրապետության ամբողջ տարածքում տուբերկուլյոզի նոր անապահով բնակավայր չի արձանագրվել: Հետևապես, Հայաստանի Հանրապետությունը այդ ժամանակ կարելի է դասել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ ապահով պետությունների շարքին:

Սակայն միայն Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում 2002-2007 թ.թ. ընթացքում կատարված մոնիտորինգի աշխատանքները ցույց են տվել, որ 32 համայնքներից 16-ում հայտնաբերվել է տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած 120 գլուխ կով: Ախտորոշիչ մորթի ենթարկած կովերի ներքին օրգաններում գերակշռող գլխաքանակի մոտ հայտնաբերվել են տուբերկուլյոզին բնորոշ օջախներ:

Հանրապետության առանձին մարզերի համայնքներում 2005-2007թ.թ. կատարած մոնիտորինգի տվյալների համաձայն տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած կենդանիներ են հայտնաբերվել նաև Արագածոտնի մարզի 6 համայնքներում, Լոռու մարզի 7 համայնքներում, Վայոց Ձորի մարզի 10 համայնքներում, Արարատի մարզի 6 համայնքներում՝ 127 գլուխ կով: Բերված փաստացի տվյալները հիմք են հանդիսանում կարծիք կազմելու, որ Հայաստանի Հանրապետությունում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզը, ինչպես խորհրդային, այնպես էլ անկախությունից հետո, ունի զգալի տարածում և չի համապատասխանում վերը նշված անասնաբուժական պետական տեսչությունում արձանագրված տվյալներին: Հետևապես, մոնիտորինգի տվյալների հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքը անապահով է ճանաչվել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ:

Մեր բազմաթիվ հետազոտությունները ցույց են տվել, որ խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզ հիվանդության ախտորոշման ժամանակ անասնաբույժ-մասնագետները բավարարվում են միայն տուբերկուլինի նկատմամբ հակազդած կենդանիներին բակային մորթի ենթարկելով: Ախտաբանաանատոմիական հետազոտությունների ժամանակ գերակշռող գլխաքանակի ներքին օրգաններում տուբերկուլյոզին բնորոշ օջախներ չեն հայտնաբերում, որի պատճառով անասնատերերի կողմից բողոքները շատացել են տուբերկուլինի նկատմամբ հակազդած կենդանիների ոչ հիմնավորված մորթերի վերաբերյալ:

3.2. Տուբերկուլյոզի ախտորոշման ալերգիական ռեակցիաների տարբերակման սիմուլտան տուբերկուլինային փորձի կիրառման հնարավորությունը անհատական տնտեսություններում

Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականից սկսած դադարել է գոյություն ունենալ սեփականության հանրային սեկտորը և կոլտնտեսությունների ու խորհրդային տնտեսությունների խոշոր եղջերավոր կենդանիների ամբողջ գլխաքանակն անցել է մասնավոր սեկտորի տրամադրության տակ: Այդ տեսակետից այժմեական նշանակություն է ստանում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման, պայքարի և կանխարգելման խնդիրներին նոր մոտեցում ցուցաբերել անասնապահության վարման նոր պայմաններին համապատասխան:

Սիմուլտան տուբերկուլինային փորձը, որի ժամանակ օգտագործվում է ՊՊԴ-տուբերկուլինը և ատիպիկ միկոբակտերիաներից պատրաստած կոմպլեքս ալերգենը (ԿԱՄ), լայնորեն կիրառվում է անասնաբուժության բնագավառում տուբերկուլինի նկատմամբ ալերգիական ռեակցիաների տարբերակման համար և հնարավորություն է տալիս կողմնորոշվելու տուբերկուլյոզի առկայության մասին՝ հանրային սեկտորի խոշոր եղջերավոր կենդանիների նախրում ոչ պակաս 6 գլուխ դրական հակազդած կենդանիների առկայության դեպքում: Դրա համար հաշվի առնելով մեր հանրապետությունում տուբերկուլյոզի էպիդեմիոլոգիական և համաճարակային բարդ իրավիճակը, կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման մեթոդների ոչ լիարժեք արդյունավետությունը, մեր առջև խնդիր է ծառացել կատարելագործել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման մեթոդները, հաշվի առնելով անհատական, ֆերմերային և կոլեկտիվ գյուղացիական տնտեսություններում տուբերկուլյոզի ախտորոշման առանձնահատկությունները, առաջարկել ախտորոշման լրացուցիչ կոմպլեքս մեթոդ:

Հայրենական և արտասահմանյան բազմաթիվ հեղինակների տվյալները ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման հիմնահարցը եղել և մնում է տուբերկուլինի նկատմամբ ոչ սպեցիֆիկ ռեակցիաների առաջացման խնդիրը: Այս ռեակցիաների տարբերակման համար առաջարկվել են տարբեր մեթոդներ: Ամբողջ աշխարհում առավել տարածվածը կաթնասունների համար ՊՊԴ-տուբերկուլինի և թռչունների ՊՊԴ - տուբերկուլինի սիմուլտան փորձն է (Նայմանով Ա.Խ., 1999, 2001; Նովակ Դ.Դ. և ուրիշ., 1984; Պաղալիցա Ա.Ս., 1995; Պոմիկանով Ն.Պ., 2005; Paul A., 1973; Wagener K., 1966 և ուրիշ.): Կատարված հետազոտություններից ստացած տվյալներով նաև հաստատվել է, որ սիմուլտան տուբերկուլինային փորձը կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլինով և ԿԱՄ-ով օժտված է բարձր տարբերակման ունակությամբ: Այս տեսակետից մեր հետազոտություններից ստացած արդյունքները համապատասխանում են մի շարք հեղինակների ստացած տվյալներին

(Նայմանով Ա.Խ., 1993, 1995; Շարով Ա.Ն., Պլոտնիկով Է.Ս., 1980; Շարով Ա.Ն., 1985; Marcovic B. et al., 1964 և ուրիշ):

Գտնում ենք, որ սիմուլտան փորձի գլխավոր և անվիճելի առավելությունը նրանում է, որ նրա կիրառման ժամանակ կտրուկ կրճատվում է ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ հակազդած կովերի քանակը և մեծ թվով ռեակցիաներ դրսևորվում են ԿԱՄ-ի միջոցով, և տվյալ կովը չի ենթարկվում անտեղի մորթի:

Մեր կողմից առաջարկած սիմուլտան տուբերկուլինային փորձի օգտագործումը բխում է գործնական անասնաբույժ - մասնագետների պահանջից և հնարավորություն է տալիս չարդարացված մորթերի կանխարգելումը, որը գյուղացիներին կբերի շոշափելի շահույթ, մանավանդ, երբ չի գործում պատճառված վնասի փոխհատուցման կարգը:

Արագացված սիմուլտան տուբերկուլինային փորձի օգտագործման հնարավորությունը անհատական տնտեսություններում, ռեակցիաների անհատական հաշվառման միջոցով ուսումնասիրել ենք Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի հինգ համայնքների բնակիչներին պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակի վրա: Նախքան փորձի սկսելը այդ համայնքներում անց ենք կացրել տուբերկուլյոզի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտություններ: Արդյունքները ցույց են տվել, որ տուբերկուլյոզի յուրաքանչյուր ծրագրային ախտորոշման համար կատարվող ալերգիական հետազոտությունների ժամանակ մշտապես ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ հայտնաբերվել են տարբեր քանակի դրական հակազդած կենդանիներ (հիմնականում կովեր): Ախտորոշիչ մորթի ենթարկած կենդանիների մեծամասնության մոտ տուբերկուլյոզին բնորոշ ախտաբանական փոփոխություններ չեն հայտնաբերվել: Բոլոր հինգ համայնքներում 2 ամսականից բարձր խոշոր եղջերավոր կենդանիների ամբողջ գլխաքանակը հետազոտել ենք համաձայն հրահանգի, կատարելով միանվագ ներմաշկային տուբերկուլինացում, որից հետո ալերգիական դրական ռեակցիայով կենդանիները 72 ժամ հետո ենթարկվել են սիմուլտան տուբերկուլինային փորձին:

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ արագացված սիմուլտան տուբերկուլինային փորձն ավելի արդյունավետ է, քանի որ այս դեպքում կրկին հետազոտվում են միայն տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած կենդանիները, կրճատվում է հետազոտությունների կատարման ժամանակը և աշխատուժը: Փաստորեն մենք պահպանելով 25.02.86թ. հրահանգով նախատեսված տուբերկուլյոզի ախտորոշման տարբերակման սիմուլտան փորձի էությունը կատարել ենք փոփոխություններ միայն կատարման ժամկետների մեջ, առաջին հերթին չենք օգտագործել տուբերկուլինացման և սիմուլտան փորձի միջև հրահանգով նախատեսված 30 օրվա ընդմիջման ժամանակը: Սա հիմնավորվում է հետևյալ գիտական տեսանկյունից. հաշվի առնելով, որ տուբերկուլինի կիրառման կրկնությունները հիվանդների մոտ միշտ առաջացնում է ալերգիական ռեակցիա, որը պայմանավորված է կենդանու օրգաններում տուբերկուլյոզի հարուցիչների կամ ատիպիկ միկոբակտերիաների առկայության հետ, տուբերկուլինին պատասխան ալերգիական ռեակցիա երբեք չի առաջանում վերջիններիս բացակայության ժամանակ: Մյուս կողմից գրականության բազմաթիվ

տվյալները և մեր կատարած փորձերի արդյունքները ցույց են տվել, որ տուբերկուլինի հաճախակի ներարկումների միջոցով անհնարին է առողջ կենդանիների մոտ առաջացնել զգայունակության բարձրացում, այսինքն տուբերկուլինը չունի զգայունակություն բարձրացնելու հատկություն: Ուստի հրահանգով նախատեսված 30 օրվա ընդմիջման ժամկետը մենք փոխարինում ենք 72 ժամով կամ մոտակա մի քանի օրով: Այսինքն ծրագրային ախտորոշումների (գարնան և աշնան) ժամանակ հայտնաբերված յուրաքանչյուր ալերգիական ռեակցիա ունեցող կենդանու վրա կարելի է կիրառել սիմուլտան փորձը և հաշվարկել ՊՊԴ-ի և ԿԱՄ-ի առաջացրած ռեակցիաների տարբերությունը, որից հետո գնահատել տվյալ կենդանու առողջ կամ տուբերկուլյոզով հիվանդ վիճակը: Ռեակցիաները անհրաժեշտ է գնահատել այսպես, դրական – կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլինի ռեակցիան ԿԱՄ-ի համեմատ ունեցել է բարձր ցուցանիշ, բացասական - ՊՊԴ-տուբերկուլինի ռեակցիան ԿԱՄ-ի համեմատ ունեցել է ցածր ցուցանիշ, կասկածելի - ՊՊԴ-ի և ԿԱՄ-ի ցուցանիշները հավասար են: Մեր կողմից առաջարկած սիմուլտան տուբերկուլինային փորձի անհատական հաշվարկման մեթոդիկան համապատասխանում է Եվրոմիության երկրների կողմից ընդունված խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման միասնական մեթոդի պահանջներին:

Աղյուսակ 2.

Խոշոր եղջերավոր կենդանիների սիմուլտան տուբերկուլինային փորձի անհատական հաշվառման արդյունքները

ը/կ	Անասնատիրոջ ազգուն, անուն	Կովի մականուն	Ռեակցիաների չափերը /մմ/			Ռեակցիայի գնահատում		Ռեակցիայի նշան
			նորմ	ՊՊԴ	ԿԱՄ	ՊՊԴ	ԿԱՄ	
1	2	3	4	5	6	7	8	9
	Խոզնավարի համայնք							
1	Մկրտչյան Վահան	մարալ	7	11	11	4	4	=
2	Մարգարյան Գառնիկ	խանգյուլ	6	10	12	4	6	-
3	Անտոնյան Ազնիվ	նախշի	8	13	15	5	7	-
4	Գրիգորյան Վարո	սոնա	7	11	13	4	6	-
5	Ղազարյան Մանվել	եղնիկ	6	10	10	4	4	=
	Խնածախի համայնք							
6	Առաքելյան Մելիք	մարալ	6	13	9	7	3	+
7	Հայրապետյան Վլադիկ	սևուկ	7	10	14	3	7	-
8	Գրիգորյան Սլավիկ	նախշուն	6	11	9	5	3	+
9	Ղուկասյան Գագիկ	աստղիկ	8	11	14	3	6	-
10	Գալստյան Մուշեղ	դուռնա	7	11	14	4	7	-
11	Սիմոնյան Արտուշ	փեյա	6	10	10	4	4	=
	Քարաշենի համայնք							
12	Բաղդասարյան Միշա	մարալ	6	12	10	6	4	+
13	Գասպարյան Սասուն	սուրմա	7	10	13	3	6	-
14	Ավետիսյան Արտուշ	խանում	6	10	13	4	7	-
15	Բաբայան Քաջիկ	մարուսյա	5	9	9	4	4	=
16	Բաղդասարյան Համլետ	նոռնիկ	8	14	11	6	3	+
17	Մարտիրոսյան Սարմեն	նարգիզ	7	14	11	7	4	+
18	Ալեքսանյան Սարո	դիկյա	8	11	13	3	5	-
	Խնձորեսկի համայնք							
19	Դիլունց Միքայել	նախշի	6	10	10	4	4	=
20	Թրվանց Սաշիկ	ջեյրան	7	13	10	6	3	+

1	2	3	4	5	6	7	8	9
21	Հարությունյան Գրիշա	7272	7	10	14	3	7	-
22	Ղալղունց Սուրիկ	նոռնիկ	5	12	9	7	4	+
23	Ղլեգունց Լիպարիտ	նարինջ	6	9	11	3	5	-
24	Գլխակյան Արկադիա	չալիկ	8	15	11	7	3	+
25	Թունյան Մարտիրոս	նոռնիկ	7	11	11	4	4	=
26	Մուրադյան Արամ	խինա	8	14	11	6	3	+
	Ակների համայնք							
27	Ղուկասյան Յուրա	խանում	7	11	14	4	7	-
28	Մինասյան Համլետ	սևգուլ	6	11	15	5	9	-
29	Առաքելյան Գարես	դիկճա	6	13	9	7	3	+
30	Սաքունց Ալո	փեյլա	8	12	12	4	4	=
31	Սմարյան Արտավազդ	նարգիզ	7	10	14	3	7	-

Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի հինգ համայնքներում կատարած աշխատանքի ամփոփ տվյալները ցույց են տալիս, որ սիմուլտան տուբերկուլինային փորձը դրվել է միայն ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ հակազդած 31 գլուխ կովերի վրա: 31 գլուխ կովերից "+" նշան ունեցել են 10-ը, "-" նշան՝ 14-ը և "=" նշան՝ 7-ը: Այսինքն, ըստ սիմուլտան տուբերկուլինային փորձի անհատական հաշվառման մեթոդի 10 գլուխ կովեր ճանաչվում են հիվանդ և ենթակա են մորթի, 14-ը առողջ, իսկ 7-ը՝ ենթակա են կրկնակի ստուգման, որի դեպքում երկու ալերգենների ստացած ռեակցիաների տվյալների համաձայն կդասվեն առողջների կամ հիվանդների շարքին: Այստեղ առանձնահատուկ նշանակություն է ստանում այս մեթոդի առավելությունը, որ անհատ գյուղացիներին պատկանող տուբերկուլինին դրական հակազդած 31 գլուխ կովերից 21-ը "փրկվել են" տուբերկուլյոզի անվան տակ անհիմն հարկադիր մորթից այն դեպքում, երբ ներկայումս աշնանային և գարնանային ստուգումների ժամանակ տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած յուրաքանչյուր կենդանի հաշվում են հիվանդ և ենթարկում են սպանդի: Նույն ճակատագրին են արժանացել նաև մոնիտորինգի մեթոդով տարբեր մարզերում ՊՊԴ - տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած 247 գլուխ կովեր:

Թեկուզ ախտաբանաանատոմիական և ալերգիական ռեակցիաների տվյալները ցույց են տվել, որ ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ գերազանցող չափերի դեպքում կենդանուն պետք է ճանաչել հիվանդ և հակառակը ԿԱՄ ալերգենի ռեակցիայի գերազանցող չափերի դեպքում և տուբերկուլյոզի բնորոշ օջախների բացակայության դեպքում կենդանուն կարելի է հաշվել առողջ, անհրաժեշտ է եղել նաև ստացած տվյալները կրկնակի հիմնավորել լաբորատոր հետազոտությունների մեթոդներով: Այդ նպատակով Գորիսի տարածաշրջանի 5 համայնքներից 3-ում (Խնածախ, Խոզնավար և Խնձորեսկ) սիմուլտան փորձի արդյունքները հանձնաժողովով արձանագրելուց հետո կատարել ենք մեկական գլուխ կովերի ստուգիչ-ախտորոշիչ մորթ: Նրանցից երկուսը ունեցել են ՊՊԴ-ի նկատմամբ ակնհայտ հակազդում, իսկ մեկը՝ ԿԱՄ-ի: Մանրէաբանական և կենսաբանական մեթոդներով լաբորատոր հետազոտություններ կատարելու համար նշված 3 կովերից առանձին-առանձին վերցվել են համապատասխան ախտաբանական նմուշներ և դրվել 30%-ոց գլիցերինի ջրային լուծույթի հերմետիկ փակված

ապակյա տարաներում: Բոլոր լաբորատոր հետազոտությունները կատարվել են համաձայն 25.02.86թ. հրահանգում նախատեսված մեթոդիկաների: Մանրէաբանական հետազոտություններից պարզվել է, որ ԿԱՄ-ի ռեակցիան գերազանցող կովի (Խոզնավար) ախտաբանական նմուշներից անջատած միկոբակտերիաներից եղել են ատիպիկ-նրանք ներկվել են Ցիլի եղանակով դրական: Գելբերգի միջավայրում աճած գաղութների գույնը, խտությունը, ձևը նման են ատիպիկ միկոբակտերիաների գաղութներին: Մյուս երկու համայնքների (Խնածախ և Խնձորեսկ) կովերի (ՊՊԴ-տուբերկուլինի ռեակցիան գերազանցող) ախտաբանական նմուշներից ատիպիկ միկոբակտերիաներ չեն անջատվել: Այս երկու համայնքների կովերի ախտաբանական նմուշներից կատարած ցանքերի միկոբակտերիաների աճի գաղութները նման են եղել տուբերկուլյոզի հարուցիչների գաղութներին: Մանրադիտակային հետազոտության ժամանակ ցանքից 39 օր անց տեսադաշտում հայտնաբերվել են Ցիլի եղանակով ներկված տուբերկուլյոզի հարուցիչներ, բարակ, կարճ, մեկական կամ խմբակային: ԿԱՄ-ի ռեակցիան գերազանցող կովի ախտաբանական նմուշներից ստացած կախուկով վարակված ծովախոզուկները փորձի ընթացքում (20 օր) գտնվել են առողջ և աշխույժ վիճակում: Հիմք ընդունելով լաբորատոր հետազոտություններից ստացված տվյալները՝ սիմուլտան փորձի ախտորոշիչ մորթի ժամանակ տուբերկուլյոզի բնորոշ օջախների բացակայությունը, ցանքերի, փոխցանքերի, միկոբակտերիաների աճի ժամկետների, գաղութների ձևի, քսուքների ներկման, տարբեր ջերմաստիճաններում և լուսային պայմաններում գաղութների գույնի փոփոխությունների և կենսաբանական փորձի արդյունքների Խոզնավար համայնքի կովի ախտաբանական նմուշներից անջատված միկոբակտերիաները դասվում են ատիպիկ միկոբակտերիաների շարքին և ըստ Ռանիոնի դասակարգման պատկանում են III և IVխմբին: Խնածախ և Խնձորեսկ համայնքների կովերի ախտաբանական նմուշներից պատրաստած կախուկներից վարակված ծովախոզուկները (4 գլուխ) սատկել են 36-ից 46 օր անց: Սատկած ծովախոզուկների հերձումից արձանագրվել են տուբերկուլյոզին բնորոշ տարածված օջախների առկայություն լյարդի, թոքերի մեջ, փայծաղի և երիկամների վրա: Լաբորատոր հետազոտությունների տվյալները լրացնում են հիմնավորելու տուբերկուլյոզ հիվանդության ախտորոշման սիմուլտան փորձի տարբերակման մեթոդի արդյունավետությունը, որի միջոցով հնարավոր է տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած յուրաքանչյուր կենդանու ալերգիական ռեակցիան անհատական գնահատման միջոցով տարբերակելու կեղծը իրականից: Այս մեթոդի կիրառումը ներկայումս հրատապ է, քանի որ թույլ է տալիս գյուղացու յուրաքանչյուր կովի հանդեպ ցուցաբերել անհատական մոտեցում և կայացնել վերջնական որոշում տուբերկուլյոզի հարցում: Կապված այն հանգամանքի հետ, որ սիմուլտան տուբերկուլինային փորձի միջոցով հնարավոր է տարբերակել ալերգիական ռեակցիաների բնույթը և մեր կողմից առաջարկած արագացված սիմուլտան տուբերկուլինային փորձը կարելի է կիրառել ծրագրային տուբերկուլինացման ռեակցիայի հաշվառման օրը (այսինքն անհրաժեշտ չէ սպասել 30 օր), ուստի այս մեթոդը ձեռք է

բերում հատուկ արդիականություն անհատական տնտեսություններում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշման ժամանակ:

3.3.Տուբերկուլյոզի նկատմամբ անապահով համայնքների և ֆերմերային տնտեսությունների առողջացումը նոր մեթոդով

Հանրապետության ամբողջ տարածքում խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի ախտորոշիչ ստուգումները յուրաքանչյուր տարի կատարվում են երկու անգամ 6-7 ամիս ընդմիջումով (վաղ գարնանը և ուշ աշնանը): Անապահով նախիրներում նոր վարակված որոշ գլխաքանակի մոտ տուբերկուլինի նկատմամբ ալերգիական ռեակցիան բացակայում է, այդպիսի կենդանիները որպես առողջ երկար ժամանակ մնալով նախրում դառնում են տուբերկուլյոզի վարակման սկզբնական աղբյուր և նախրի երկարատև անապահովության պատճառ: Մեր կողմից անցկացրած մոնիտորինգի հետազոտությունների արդյունքները ապացուցում են վերը նշվածը: Նույն համայնքներում յուրաքանչյուր ծրագրային ստուգումների ժամանակ հաճախակի հայտնաբերվում են տարբեր քանակի տուբերկուլյոզով հիվանդ կենդանիներ: Անապահով տնտեսությունների առողջացման համար հրահանգներով առաջարկվել է տարբեր ընդմիջումներով տուբերկուլինացման սխեմաներ: Ընդհանուր իմաստը կայացել է նրանում, որ հնարավորինս հիվանդներ հայտնաբերել և մաքրել նախիրը: Անապահով տնտեսություններում, համածայն հրահանգի 1-ին և 2-րդ տուբերկուլինացումները կատարվել և կատարվում են 1,5-2 ամիս ընդմիջումներով: 2-րդ տուբերկուլինացման ժամանակ ալերգիական ռեակցիան առաջանում է այն կենդանիների մոտ, որոնք թեկուզ 1-ին տուբերկուլինացման ժամանակ վարակված են եղել տուբերկուլյոզի հարուցիչներով, սակայն օրգանիզմը չի հասցրել դառնալ զգայունակ տուբերկուլինի նկատմամբ, դրանք հանդիսացել են աներգիկներ և որպես առողջ մնացել են նախրում: Այս սխեմայով անապահով տնտեսությունների առողջացումը տևել է երկար, մանավանդ, եթե նախրի վարակվածության տոկոսը մինչև անապահով հայտարարելը եղել է բարձր: Կապված անասնապահության վարման բնույթից, ամառային արոտավայրի ժամանակաշրջանում (4-5 ամիս) անապահով նախիրների հերթական ստուգումներ չի կատարվում և ստեղծվում է նպաստավոր պայմաններ ավելի շատ գլխաքանակ վարակվելու համար: Բացի այդ բազմաթիվ առողջացած տնտեսություններում տուբերկուլյոզը մեծ չափերով կրկնվել է նորից և պատճառել տնտեսական վնասներ: Առողջացած նախիրներում վարակի հանդեպ առկա լատենտ միկրոբիզմով կենդանիների որոշ գլխաքանակ նույնպես գտնվել են աներգիկ վիճակում և տուբերկուլինի միանվագ ներարկման նկատմամբ ալերգիական ռեակցիան բացակայել է: Այս առումով հաշվի առնելով տուբերկուլյոզ հիվանդության առաջացման և զարգացման փուլերը (առաջնային աֆեկտ, երկրորդային աֆեկտ, տարածված փուլ-գեներալիզացիա), բազմաթիվ հեղինակների կողմից առաջարկվել է անապահով նախիրների առողջացման կրկնակի ներմաշկային տուբերկուլինացման մեթոդը (Կուբլիցկաս Վ.Վ., Կարտինկայտիս Կ.Մ., 1987; Պրոկոպևա Ն.Ի. և ուրիշ., 1990; Ուրբան Վ.Պ., 1988; Շարով

Ա.Ն., 1996; Շիրվանյան Յու. Ա., 1990): Նշված հեղինակները փորձերի միջոցով հիմնավորել են, որ անապահով տնտեսությունների առողջացման նպատակով անհրաժեշտ է կիրառել կրկնակի կոմպլեքս տուբերկուլինացման փորձը, որի ժամանակ հայտնաբերվում է 3-5 անգամ ավել հիվանդներ, քան հրահանգով նախատեսված միանվագ տուբերկուլինացման դեպքում, և նպաստում են անապահով նախիրների ավելի կարճ ժամկետում առողջացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուբերկուլյոզի անապահով նախիրներում կարող են առկա լինել նաև տարածված փուլում գտնվող հիվանդներ, ապա անհրաժեշտություն է առաջացել կրկնակի ներմաշկային տուբերկուլինացման ժամանակ կիրառել նաև ակնային փորձը: Ապացուցվել է, որ տուբերկուլյոզի միլիար (տարածված) փուլում գտնվող ոչ բոլոր հիվանդներն են հակազդում անգամ կրկնակի ներմաշկային տուբերկուլինացմանը և հանդիսանում են նույնպես աներգիկներ (Շիրվանյան Յու. Ա., 1990): Այդպիսի հիվանդները որպես առողջներ երկար ժամանակ մնալով նախրում դառնում են վարակի աղբյուր:

Մեր կողմից կրկնակի ներմաշկային և միաժամանակ միանվագ ակնային տուբերկուլինացման կոմպլեքս մեթոդը կիրառվել է Այունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի Սալվարդի և Գորայքի համայնքներում:

Նախքան փորձարարական աշխատանքները կատարվել են համաճարակաբանական հետազոտություններ՝ պարզելու համայնքների համաճարակային իրավիճակը տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ: Այսպես, տեղի մասնագետների կողմից 2004 թվականին Սալվարդի համայնքի ազգաբնակչությանը պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը ենթարկվել է տուբերկուլինացման, հայտնաբերվել են 4 գլուխ դրական հակազդած կովեր: 2005թ. Սալվարդի համայնքում տուբերկուլյոզի նկատմամբ ծրագրային ախտորոշիչ ստուգում չի կատարվել: 2006թ. գարնանն ու աշնանը կատարված ախտորոշիչ ստուգումների ժամանակ հիվանդների թիվը հասել է 20-ի: Այս երևույթը հակված ենք բացատրելու նրանով, որ 2004 թ. միանվագ տուբերկուլինացման ժամանակ նախրում առկա են եղել նոր վարակվածներ, որոնք չեն հայտնաբերվել և մեկ տարի մնալով նախրում վարակել են առողջներին: 2004-2006թ.թ. տուբերկուլինի նկատմամբ հակազդած կովերից հանձնաժողովի մասնակցությամբ կատարվել է ախտորոշիչ մորթ և ներքին օրգաններում հայտնաբերվել է տուբերկուլյոզային օջախներ, որով հաստատվել է համայնքում տուբերկուլյոզ հիվանդության առկայությունը: Գորայքի համայնքում կատարված համաճարակաբանական հետազոտությունների տվյալները ցույց են տվել, որ տեղի մասնագետների կողմից վերջին տարիներին (2002-2006 թ.թ.) անցկացրած մոնիտորինգի ժամանակ համայնքի ազգաբնակչությանը պատկանող խոշոր եղջերավոր կենդանիների մեջ հայտնաբերվել է ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած 11 գլուխ կովեր: Տեղի մասնագետների և անասնաբուժական պետական տեսչության մարզային գլխավոր մասնագետների մասնակցությամբ կատարվել է նշված տարիներում տուբերկուլինի նկատմամբ հակազած կովերի բակային մորթ: Գերակշռող գլխաքանակի ներքին օրգաններում (թոքերում, լյարդում, վերկրծային և այլ ավշային հանգույցներում) հայտնաբերվել են տուբերկուլյոզին

բնորոշ տարբեր չափերի օջախներ, հիմնավորելով Գորայքի համայնքում տուբերկուլյոզ հիվանդության առկայությունը:

Հիմք ընդունելով վերը նկարագրված համաճարակաբանական հետազոտությունների տվյալները, Սալվարդի և Գորայքի համայնքներում տուբերկուլյոզի նկատմամբ անապահով նախիրների առողջացման նպատակով կիրառել ենք կրկնակի ներմաշկային և միաժամանակ միանվագ ակնային կոմպլեքս տուբերկուլինացման մեթոդը: Փորձերի արդյունքները ցույց են տվել, որ Սալվարդի և Գորայքի համայնքներում մեր կողմից երկու անգամ տուբերկուլինացման կոմպլեքս մեթոդի կիրառման արդյունքում՝ 3-րդ անգամ կրկնման ժամանակ խոշոր եղջերավոր կենդանիների նախիրներում տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած կենդանի չի հայտնաբերվել: 1-ին ներմաշկային տուբերկուլինացման ժամանակ երկու համայնքներում հայտնաբերվել է տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած 23 գլուխ, 2-րդ ներմաշկայինին՝ 14 գլուխ և ակնայինին՝ 3 գլուխ կովեր: Նշված գլխաքանակից կատարվել է 3 գլուխ կովերի ստուգիչ-ախտորոշիչ մորթ հանձնաժողովի մասնակցությամբ: Տուբերկուլյոզին բնորոշ օջախներ է հայտնաբերվել թոքերում, լյարդում, տարբեր ավշային հանգույցներում: Փորձի արդյունավետությունը որոշելու նպատակով 6 ամիս անց նույն համայնքներում տուբերկուլյոզի ծրագրային ստուգումների ժամանակ կատարվել է ստուգիչ միանվագ ներմաշկային տուբերկուլինացում: Տուբերկուլինի նկատմամբ դրական հակազդած կենդանի չի հայտնաբերվել:

Հետևապես, տուբերկուլյոզով անապահով նախիրների առողջացման կրկնակի ներմաշկային և միաժամանակ միանվագ ակնային տուբերկուլինացման կոմպլեքս մեթոդը համեմատած նախկին և ներկա գործող հրահանգներով նախատեսված միանվագ տուբերկուլինացման մեթոդի հետ, կարելի է գնահատել արդյունավետ, որը հնարավորություն է ստեղծում հայտնաբերելու տուբերկուլյոզային պրոցեսի զարգացման տարբեր փուլերում գտնվող հիվանդ կենդանիներին: Ախտորոշման ժամկետի էական կրճատումով հայտնաբերում են անապահով նախիրներում գտնվող աներգիկ հիվանդներին: Այս եղանակը նորույթ է և այն կարելի է առաջարկել խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզի նկատմամբ անապահով տնտեսությունների առողջացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հետադարձ վերլուծական տվյալներով խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզն ունի անհավասարաչափ, սակայն Հայաստանի Հանրապետության բոլոր կլիմայա-աշխարհագրական գոտիներում լայն տարածում գտած հիվանդություն.

ա) տուբերկուլյոզային համաճարակի ընթացքի զարգացման կորագծերն ունեն ալիքաձև բնույթ, հիվանդացության ակտիվացմանը միշտ հաջորդել է միջհամաճարակային մարման շրջանները:

բ) տուբերկուլյոզի տարածվածությունը, անապահով համայնքներում և ֆերմաներում ինֆեկցիայի տևականությունը, առողջացված տնտեսություններում հիվանդության

կրկնության դեպքերը կապված են ոչ լիարժեք հակատուբերկուլյոզային համալիր միջոցառումների կատարման, այդ թվում ոչ պատշաճ մակարդակով կազմակերպչա-տնտեսական, անասնաբուժասանիտարական միջոցառումների, հրահանգով սահմանված կենդանիների պարբերական ստուգումների և հիվանդներին ժամանակին խոտանման հետ,

գ) համաճարակաբանական վերլուծության ժամանակահատվածում հիվանդացության բարձր ինտենսիվությունն է արձանագրվել առավելապես հասակավոր կենդանիների շրջանում, որը կազմում է դրական հակազդածների ավելի քան 70%-ը:

Տուբերկուլյոզի տարածվածության բարձր ինտենսիվության տարածքներ են համարվել Ախուրյանի, Ամասիայի, Կապանի, Սիսիանի շրջանները:

2. էպիդեմիոլոգիական հետազոտության արդյունքներով հիմնովին ապացուցվել է մարդկանց հիվանդացության անմիջական կապը կենդանիների տուբերկուլյոզի հետ: Տուբերկուլյոզով մարդկանց վարակվածության բարձր ցուցանիշ է արձանագրվել հիմնականում այն շրջաններում և տարիներին, որտեղ հիվանդացության ինտենսիվությունը բարձր է խոշոր եղջերավոր կենդանիների մեջ:

3. Սիսիանի տարածաշրջանի օրինակով համայնքների համաճարակային իրավիճակի հսկողության (մոնիտորինգ) արդյունքում բացահայտվել է կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլին ալերգենի ախտորոշիչ բարձր արդյունավետությունը տուբերկուլյոզով հիվանդ կենդանիների հայտնաբերման դեպքում:

Տուբերկուլյոզային ինֆեկցիայով կրկնավարակումը (ռեինֆեկցիա) առավելապես արձանագրվում է ծրագրային հետազոտությունների ժամանակ նախկին անապահով համայնքների առողջացումից հետո:

4. Փորձարարական հետազոտության արդյունքներով ապացուցվել է կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլինի և ԿԱՄ ալերգենի օգտագործմամբ սիմուլտան տուբերկուլինային փորձի տարբերակիչ բարձր ախտորոշիչ հատկությունը հիվանդության հանդեպ ապահով համայնքներում ատիպիկ միկոբակտերիաներով վարակված կենդանիների հայտնաբերման հիմնահարցում:

5. Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի 5 համայնքներում կատարված սիմուլտան տուբերկուլինային փորձերի տվյալներով ապացուցվել է, որ ռեակցիան անհրաժեշտ է կարդալ ալերգենների ներարկումից 72 ժամ հետո, իսկ հաշվարկը կատարել անհատական:

6. Ալերգիական ռեակցիաների արդյունքները գնահատելու դեպքում դրական հաշվել, եթե ՊՊԴ-տուբերկուլինի նկատմամբ հակազդած կենդանիների ալերգիական ռեակցիայի չափերը ավելի բարձր են, բացասական – հակազդեցությունը ավելի բարձր է ԿԱՄ-ի նկատմամբ և կասկածելի – հակազդած կենդանիների ռեակցիաների չափերը հավասար են երկու ալերգենների նկատմամբ:

7. Տուբերկուլյոզով անապահով նախիրների առողջացման կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային համալիր տուբերկուլինացման մեթոդը գնահատվում է առավել արդյունավետ: Կարճ ժամանակահատվածում անապահով նախիրները հուսալիորեն

մաքրվում են տուբերկուլյոզի զարգացման տարբեր փուլերում գտնվող հիվանդներից և աներգիկներից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տուբերկուլինի նկատմամբ սպեցիֆիկ և ոչ սպեցիֆիկ ալերգիական ռեակցիաների տարբերակման նպատակով հայտնի մեթոդների հետ միասին գյուղացիական տնտեսությունների համար օգտագործել նաև յուրահատուկ համալիր ախտորոշիչ հետազոտություններ, որը ընդգրկում է՝

ա) սիմուլտան տուբերկուլինային փորձի կիրառումը կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլինով և ԿԱՄ-ով, յուրաքանչյուր կենդանու համար ռեակցիաների անհատական հաշվառումով,

բ) արագացված սիմուլտան տուբերկուլինային փորձը կաթնասունների ՊՊԴ-տուբերկուլինով և ԿԱՄ-ով կիրառել ծրագրային ներմաշկային տուբերկուլինացման ժամանակ միայն դրական հակազդած կենդանիների վրա, ռեակցիան կարդալուց 72 ժամ հետո:

2. Տուբերկուլյոզով անապահով խոշոր եղջերավոր կենդանիների նախիրների հուսալի առողջացման նպատակով առաջարկում ենք կիրառել կրկնակի ներմաշկային և միաժամանակ ակնային համալիր տուբերկուլինացման մեթոդը:

<u>Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ</u>

1. Г. Л. Багиян, "Эпизоотическая характеристика туберкулеза крупного рогатого скота в Республике Армения", Ереван, "Агрогитутюн", 2007, N 3-4, с. 145-149
2. Գ.Լ. Բաղիյան, «Խոշոր եղջերավոր անասունների տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ անցկացված մոնիտորինգի տվյալների վերլուծություն», Երևան, «Ագրոգիտություն», 2007, N 11-12, էջ 519-522
3. Ю. А. Ширванян, Г. Л. Багиян, С. Л. Григорян, "Совершенствование диагностики туберкулеза крупного рогатого скота с учетом новых методов ведения животноводства", Известия аграрной науки, Тбилиси, 2007, т. 5, н. 4, с. 59-61
4. Յու. Ա. Շիրվանյան, Գ. Լ. Բաղիյան, Ս.Լ. Գրիգորյան, «Կրկնակի ներմաշկային և ակնային տուբերկուլինային փորձի կիրառումը տուբերկուլյոզով անապահով համայնքների առողջացման դեպքում», Երևան, «Ագրոգիտություն», 2008, էջ 143-146, N 3-4

БАГИЯН ГРИША ЛЕВОНОВИЧ

Изучение эпизоотологии туберкулеза крупного рогатого скота в Республике Армении

РЕЗЮМЕ

Ключевые слова: Туберкулез, туберкулин, туберкулинизация, симультанная проба, мониторинг, эпизоотология, профилактика, оздоровление, специфическая и неспецифическая аллергическая реакция.

Диссертационная работа посвящена изучению распространения туберкулеза КРС в различных зонах Республики Армения, динамики развития инфекции, результаты проведения мониторинга по выяснению эпизоотической ситуации туберкулеза в населенных пунктах отдельных областей республики, возможность применения симультанной туберкулиновой пробы в индивидуальных хозяйствах с индивидуальным учетом аллергических реакций с применением ППД-туберкулина для млекопитающих и КАМ и новые методы оздоровления неблагополучных по туберкулезу населенных пунктов с учетом условий ведения животноводства.

Выяснилось, что туберкулез крупного рогатого скота в Республике Армении имеет широкое, но не равномерное распространения. По практическим данным мониторинга за 2005-2007 г.г. установлено, что туберкулез крупного рогатого скота регистрировался в большинстве населенных пунктах различных областей республики. Экспериментально установлено, что симультанная туберкулиновая проба с примененем ППД-туберкулина для млекопитающих и КАМ является эффективным методом для дифференциации специфических и неспецифических аллергических реакций при диагностике туберкулеза крупного рогатого скота. Предлагаемая нами ускоренная симультанная проба в индивидуальных хозяйствах с индивидуальным учетом аллергических реакций весьма актуальна и необходимо внедрить в ветеринарную практику.

Использование двухкратной внутрикожной и одновременно глазной пробы туберкулинизации при оздоровлении неблагополучных по туберкулезу крупного рогатого скота населенных пунктах дает возможность выявить больных животных в разных стадах развития болезни, сократить сроки оздоровления и надежно очистить неблагополучное стадо от больных туберкулезом животных.